Կարգապահական գործ թիվ ԿԳ-16110

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 126-րդԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/82-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խորշուդյանի, Հարություն Հարությունյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Դավթյանին (արտոնագիր թիվ 1609) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված 18.07.2016թ. տեղեկանքի համաձայն փաստաբան Արմեն Դավթյանն ունի 110.000 (հարյուր տաս հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. սեպտեմբերից 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 265-Ա/ԿԳ-16110 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արմեն Դավթյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 01.08.2016թ-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 03-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Փաստաբան Արմեն Դավթյանը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին անհայտ պատճառներով նիստին չի

ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Արմեն Դավթյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 29.01.2013թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Արմեն Դավթյանը ունի 110.000 (հարյուր տաս հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. սեպտեմբերից 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված 18.07.2016թ. տեղեկանքով),

3) փաստաբան Արմեն Դավթյանը իր անդամավճարի պարտքը մարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.10.2016թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Արմեն Դավթյանի (արտոնագիր 1609, ստացված՝ 29.01.2013թ.) նկատմամբ 2013-2016 թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Դավթյանին չպետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ» կարգի (Նոր խմբագրությամբ) (այսուհետ՝ Կարգ) 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:

Հաշվի առնելով Պալատի խորհրդի վկայակոչված որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Արմեն Դավթյանի նկատմամբ անդամավճար չվճարելու կապակցությամբ առաջին անգամ է հարուցվել կարգապահական վարույթ և վերջինս անդամավճարի պարտքը մարել է ամբողջությամբ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ և 39.8-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի

իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Կարգի 17-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Փաստաբան՝ Արմեն Դավթյանի (արտոնագիր թիվ 1609) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (Նոր խմբագրությամբ) 17-րդ կետի հիմքով:

2.Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկելու փաստաբան Արմեն Դավթյանին (արտոնագիր թիվ 1609):

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան